ՀՍԽՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

ՀԿԿ-Ի ԿԵՆՏՐ. ԾՐԱԳՐԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԿԱԲ.

# ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

/ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱԺԻՆ/

ԵՐԵՎԱՆ 1936 Թ.

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

/Նախադպրոցական բաժինների համար/.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ - 1 ժամ

Ուսման դասընթացի խնդիրներն են՝ դաստիարակության և կրթության պատմության կարևորագույն դեպքերի և փաստերի սիստեմատիկ հետևողական ուսումնասիրությունը (հատուկ ուշադրություն դարձնելով նախադպրոցական դաստիարակության պատմությանը), մանկավարժների և դպրոցի տեսության և պրակտիկայի բնագավառում տված ժառանգության քննադատական վերամշակումը և խորհրդային դպրոցի ու նախադպրոցական դաստիարակության տեսության և պրակտիկայի նվաճումների հաշվառումը:

Պատմական-մանկավարժական գործիչների նշանակությունն իր մասնագիտության կոնկրետ-պատմական պայմաններին տիրապետելը և տեսական մանկավարժության խնդիրներին կոնկրետ մոտենալու գործում:

I. Դաստիարակությունն անտիկ աշխարհում - 2 ժամ

Դաստիարակությունը տոհմական հասարակարգում:

Համայնության և ընտանիքի ծագումը: Ընտանիքը և տոհմական համայնքը որպես դաստիարակության հիմնական բջիջներ: Դաստիարակչական դերե-

15 MAR 2018



րի բաշխումը ծնողների մեջ և տղաների ու աղջիկների տարբեր դաստիարակությունը:

Փոքրիկ երեխաների դաստիարակությունն ընտանիքում. նրանց կերակրելը, խնամքը և երեխաների մասնակցությունը սննդամթերքներ ձեռք բերելու և պատրաստելու գործում:

Դասակարգային դաստիարակության երևան գալը ստրկության պայմաններում և դաստիարակության միջոցները ստրկատերերի ձեռքում կենտրոնանալու կապակցությամբ:

Դաստիարակությունն անտիկ Հունաստանում և Հին Հռոմում, որպես ստրկատիրական կարգերի ավելի տիպիկ պետություններ: Հին հունական պետության երկու տիպը և դաստիարակության երկու սիստեմները Սպարտայի և Աթենքի կյանքը գոյությունն ընտանիքում և հասարակության մեջ: Մինչև 7 տարեկան երեխաների տնային դաստիարակությունը Սպարտայում և Աթենքում: Դպրոցական դաստիարակությունը Հունաստանում և Հռոմում: Նախադպրոցական հասակի երեխաների դաստիարակության խնդիրը Պլատոնի (երեխաների խաղերն ու դաստիարակությունը մինչև 3 տարեկան հասակը, երեխաների միատեղ հասարակական դաստիարակությունը մինչև 6 տարեկան հասակը, մանկական խաղեր հրապարակներում, տղաների և աղջիկների դաստիարակության բաժանումը 6 տարեկանից հետո և նրանց նախապատրաստումը դպրոց մտնելու համար, [illegible] նախադպրոցական և դպրոցական հասակի երեխաների դաստի-[illegible]) և Արիստոտելի մոտ (մինչև 5 տա-

րեկան հասակի երեխաների անհատական դաստիարակությունն ընտանեկան միջավայրում, 5-7 տարեկան երեխաների ուսուցման սկիզբը։ Ծնողի, դայակի և մոր դերը նախադպրոցական հասակի երեխաների դաստիարակության գործում)։

Երեխաների դաստիարակության պրակտիկայի առանձնահատկությունները հին Հռոմում։ Նախադպրոցական հասակի երեխաների ընտանեկան դաստիարակությունը։ Առաջին դաստիարակչական տների ծագումը նախադպրոցական և դպրոցական հասակի անապաստան երեխաների համար։

II Դաստիարակությունն Արևմտյան Եվրոպայում (միջին դար) - 2 ժամ։

Երեխաների դաստիարակության հիմնական սիստեմը Միջին դարերում։ Կղերականների և ասպետների դաստիարակությունը։ Կրթության մենաշնորհայնությունը հոգևորականության ձեռքում և ժողովրդական մասսաների դաստիարակության ու կրթության կրոնական-միստիկական բնույթը եկեղեցական դպրոցում։ Համքարական և գիլդիական դպրոցների ծագումը առևտրա-արհեստավորական բնակչություն ունեցող քաղաքներում։

Երեխաների և կանանց դրությունը ընտանիքում և հասարակության մեջ։

Նախադպրոցական հասակի երեխաների ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները ֆեոդալական հասարակարգի տարբեր դասերում։

[illegible] II-296999ր

III Դաստիարակությունն ու մանկավարժությունը [illegible] Վերածնության Եվրոպա-



յում (նոր շրջան) - 2 ժամ։

1. Ժողովրդական կրթությունը և մանկավարժական մտածողությունը XVI և XVII դարերում - 1 ժամ։

Հումանիստական և ռեֆորմացիոն դպրոցների ծագումը ու զարգացումը կաթոլիկ-կրոնական-ֆեոդալական պայքարի կենտրոններից մեկում Գերմանիայում։

Յան Կոմենսկի.- Միջնադարի սխոլաստիկ դաստիարակության քննադատությունը.- Ժողովրդական կրթության սիստեմի հիմնավորման հիմնական սկզբունքները Ա. Կոմենսկու երկերում։ Կոմենսկու հայացքները կնոջ կրթության և մայրերի պատրաստման մասին՝ երեխաների դաստիարակության համար։ Մայրական դպրոց՝ նախադպրոցական հասակի երեխաների համար։ Մայրական դաստիարակության խնդիրները և բովանդակությունը ֆիզիկական, կրոնական-բարոյական, աշխատանքային, մտավոր և գեղարվեստական դաստիարակության բնագավառներում։

Ծանոթություն քաղաքավարության հետ։ Մոր և դայակի դերը նախադպրոցական հասակի երեխաների մայրական դաստիարակության մեջ։ Խաղալիքները ու պատիժը մայրական դաստիարակության մեջ։ Երեխաների դպրոց մտնելը։ Ձեռնարկներ մայրերի համար և առաջին գրքույկները նախադպրոցական հասակի երեխաների հետ պարապելու համար։

2. Ժողովրդական կրթությունը և մանկավարժական մտածողությունը անգլիական հեղափոխությունից մինչև ֆրանսիական բուրժուական հեղափոխությունը — 4 ժամ

Դպրոցական կրթությունն Անգլիայում՝ անգլիական հեղափոխության նախօրեին և ժամանակա-

Ռուսիայի հեռավոր Արևելյան կրթության՝ համակարգը XVII դարի հեղափոխության մեջ բուրժուազիայի ձեռք բերած քաղաքական հաջողությունների կապակցությամբ և ռեակցիոն դպրոցի վերակառուցումը արդյունաբերական բուրժուազիայի ձեռքում: Եկեղեցական-աստվածաբանական կազմակերպությունների գործունեության հանդես գալը մանկավարժական կրթության գործում):

Ջոն Լոկկ.- Դաստիարակության հիմնելը բնության վրա և երեխայի կարիքը: Աշխատանքի պարապմունքների դաստիարակության նշանակը: Ֆիզիկական վարժությունների ուսուցումը, ֆիզիկական շարժումների և աշխատանքի դերը նախադպրոցական և դպրոցական հասակի երեխաների դաստիարակության գործում: Դաստիարակության կարգապահությունը:

Ժան-Ժակ Ռուսսո.- «Բնական դաստիարակության» հիմնական սկզբունքները, սկզբունքներն ու բովանդակությունը երեխայի տարիքային կարգավորման տարբեր շրջաններում: Ռուսսոյի հայացքները ընտանիքում և հասարակության մեջ կնոջ դրության մասին: Ծնվել և նախադպրոցական հասակի երեխաների դաստիարակության առանձնահատկությունները (Ֆիզիկական, բարոյական դաստիարակությունը, առաջին զգայարանները, մանկան լեզվի դաստիարակությունը, մանկան կամավորության և ազատության դեմ պայքարելու մեթոդները, աշխատանքը դաստիարակության մեջ): Մանկավարժի դերը նախադպրոցական հասակի երեխաների դաստիարակության գործում:

3. Ժողովրդական կրթությունը և մանկավարժական տեսությունը Ֆրանսիական բուրժուական հեղափոխու-



թյան շրջանում – 3 ժամ:

Կրթության նոր սիստեմի բուրժուական պրոեկտները: Միրաբոյի, Թալեյրանի և Կոնդորսեի նախագծերը կրոնը աշխարհիկության և դերի, նոր կրթության; երեխաների ընտանեկան դաստիարակության և դպրոցական կրթության մասին: Ձախ-յակոբինյան պարզիմի այս պրոեկտների նկատմամբ՝ առաջադրված Լեպելետիեի դաստիարակության և կրթության պրոեկտում: Ընտանեկան դաստիարակություն մինչև 5 տարեկան երեխաների համար, կոմունալ բերած մայրերին զրկելու նպատակով՝ երեխաների դաստիարակության գործում; 5-12 տարեկան երեխաների «հասարակական» դաստիարակությունը, ազգային դաստիարակության տներում:

Մասնավորի և աշխատանքային պատրաստումը որպես դաստիարակչական նոր սիստեմի հիմնական խնդիր: Թերմիդորյան սիստեմի որոշումը մեջ՝ ու Թերմիդորյան հեղաշրջումից հետո:

Հենրիխ Պեստալոցցի.- Դաստիարակչական սիստեմի մի Շվեյցարիայում որպես հասարակական տնտեսության հեղափոխությունների վերացման և ընդհանուր կյանքի քաղաքական մասնավոր սեփականատիրական ելքի մեթոդների տնտեսական ավարտման մեջ:

Մոր դերը ընտանիքում և երեխաների դաստիարակման մեջ: Երեխաների բնածին ուժերի զարգացումը: Դիդակտիկ չափանիշները և նրանց դերը դաստիարակության մեջ՝ սկսած մանկությունից և նախադպրոցական հասակի տարիքից: Երեխաների աշխատանքային դաստիարակության բովանդակությունը ու մեթոդիկան:

Պեստալոցցու աշխատանքային նախադպրոցական և դպրոցական հասակի երեխաների յերկսեռ դաստիարակության գործում։ Մանկական դաստիարակը վորպես մանկապարտեզի նախապայմաներ, նրա աշխատանքի բովանդակությունը և մեթոդները։ «Գիրք մայրերի համար»։

Պեստալոցցու դաստիարակչական պլանների և սոցիալիզմի գծվառությունները ու ընդհանուր անհաջողությունը։

Կ. Ժողովրդական կրթությունը և մանկավարժական տեսությունը արևմտյան Յեվրոպայում (XIX դար) – 4 ժամ։

Բուրժուական դպրոցական սիստեմի կազմավորումը արևմտյան Յեվրոպայի գլխավոր պետություններում։ Ֆրիդրիխ Ֆրեբելը և նախադպրոցական դաստիարակության նրա սիստեմը։ Կենսագրական տվյալներ։

Ֆրեբելի բնության նկատմամբ փիլիսոփայական և կրոնական հայացքները և իդեալիստական [illegible] մեթոդաբանությունից բխող մարդկային [illegible] կարգավորման տարբեր ըղձանների դաստիարակության նպատակները, խորհրդանշի ուղղակիորենությունը։ Մանկապարտեզների կազմակերպման դաստիարակը նախադպրոցական հասակի յերեխաների դաստիարակելու գործում ընտանիքին օգնելու և մայրերին յերեխաներին դաստիարակելու համար նախապատրաստելու նպատակով։ Ֆրեբելի սիստեմը, նրանից փիլիսոփայական և մանկավարժական հիմնավորումը և ձեռնագործական մեթոդիկան ձևեր ու նախադպրոցական հասակի յերեխաների պարապմունքներում։

Կրոնական-բարոյական, ֆիզիկական և մտավոր դաստիարակությունը նախադպրոցական



հասակում։ Խաղերի և աշխատանքի դերը նախադպրոցական հասակի յերեխաների դաստիարակման գործում նրանց փոխադարձ կապը (խաղի և աշխատանքային դաստիարակության մեթոդիկան)։

Ֆրեբելյան շարժման կազմավորումը XIX դարի յերկրորդ կեսում՝ Գերմանիայում, Ամերիկայում, Ֆրանսիայում, Անգլիայում և այլ յերկրներում։

Գիտական սոցիալիզմի նախորդների՝ ուտոպիստ սոցիալիստ Ֆուրյեի և Ռ. Օուենի հայացքները յերեխաների դաստիարակության մասին։

Կապիտալիստական կարգերի և նրա դաստիարակության սիստեմի քննադատությունը և Ֆուրյեի «նոր դաստիարակության սիստեմի» ուտոպիական [illegible] բնութագրումը (յերեխաների դաստիարակության նպատակները, բովանդակությունը ու մեթոդիկան ըստ տարիքային շրջանների)։

Ռ. Օուենի ուտոպիական հայացքները հասարակության վերափոխության մասին՝ յերեխաների «բնավորությունը կրթելու» և դաստիարակելու միջոցով։

Ռոբերտ Օուենը վորպես բանվոր դասակարգի նախադպրոցական հասակի յերեխաների հասարակական դաստիարակության հիմնադիրը։ Նյու-Լանարկյան փորձը՝ խոշոր ֆաբրիկային արտադրություններին կից մանկական հրապարակներ և դպրոցներ կազմակերպելու ուղղությամբ։

Գիտական սոցիալիզմի հիմնադիրներ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի ուսմունքը հասարակական դաստիարա-

ար[illegible]կության մասին: Բուրժուական դպրոցի դասակարգային էության վերլուծությունը և դաստիարակության բուրժուական սիստեմի կազմավորման պատմական անխուսափելիությունը: Բանվոր դասակարգի յերեխաների դաստիարակության սոցիալիստական սիստեմը, վորն ընդհանուր կրթությունը միացնում է արտադրական աշխատանքի հետ: Պոլիտեխնիկ կրթություն: Կանանց և յերեխաների աշխատանքը և ընտանեկան դաստիարակության ճգնաժամը - նրա փոխարինումը բանվոր դասակարգի յերեխաների հասարակական դաստիարակությամբ: Յերեխաների ընտանեկան դաստիարակության մասին Դյուրինգի հայացքների քննադատությունը Էնգելսի կողմից: Պայքար պրուդոնիստների դեմ I Ինտերնացիոնալի Ժնևի կոնգրեսում՝ ընտանեկան դաստիարակության հարցի շուրջը:

Փարիզյան կոմունայի լուսավորական քաղաքականության վորոշ պատմական նշանակությունը (հոգատարություն նախադպրոցական դաստիարակության և ընդհանուր ժողովրդական լուսավորության մասին, պայքար դպրոցի կրոնականության դեմ, կրթության միացումն աշխատանքի հետ):

IV Դաստիարակությունն ու մանկավարժությունն արևմտյան Յեվրոպայում և ԱՄՆ-ում (նորագույն շրջան)

Նախադպրոցական դաստիարակությունը բուրժուական յերկրներում (13 ժամ):

1. Ժողովրդական կրթությունը և մանկավարժական տեսությունն Արևելյան Յեվրոպայում XIX դարի վերջերում և XX դարի սկզբում - 5 ժամ.



ների ծրագրերը: Աշխատանքային տարրերի խորացումը Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի Մանհեյմյան կոնգրեսում (1906 թ.) նախադպրոցական հասակի յերեխաների դաստիարակության նպատակով:

Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի դավաճանական դերը դաստիարակության հարցերում:

Նախադպրոցական դաստիարակությունը ֆաշիստական Գերմանիայում:

2. Նախադպրոցական դաստիարակությունը ԱՄՆ-ում - 2 ժամ.

Մանկապարտեզն ու դպրոցը վորպես սոցիալական կենտրոններ և ժողովրդական կրթության հիմնական ողակներ, վորոնց նպատակն է վերացնել դասակարգային հակասությունները և հասնել բուրժուական դեմոկրատիայի իդեալներին: Զենետրի «Տերրը» նախադպրոցական հասակի յերեխաների դաստիարակության գործում:

Ջոն Դյուին և Սոննի Հիլլ նախադպրոցական մանկավարժության մասին: Ամերիկյան մանկապարտեզի պրակտիկայի վերլուծությունը:

3. Մարի Մոնտեսորիի մանկավարժական սիստեմը - 6 ժամ

Կենսագրական տեղեկությունները Մարի Մոնտեսորիի մասին: Նրա փորձնական և գիտական-տեսական գործունեությունը վորպես բժշկի և մանկավարժի:

Մոնտեսորիի քաղաքական և փիլիսոփայական հայացքները հասարակության վերափոխության մա-

Բուրժուական մանկավարժության հիմնական ուղղությունները դպրոցի բարենորոգման հարցերում, խոշոր արդյունաբերության տեխնիկայի զարգացման և դասակարգային պայքարի հիման կապակցությամբ: Աշխատանքային դպրոցի տեսությունը ըստ Կերշենշտեյների, Լայի և Շաբելմանի. Դպրոցը բուրժուական քաղաքականության ռեակցիային սպասարկելու դերում (նպատակները, բովանդակությունը, մեթոդները, կազմակերպումը):

Կանանց բուրժուական շարժման ծագումն ու զարգացումը և երեխաների դաստիարակության խնդիրները: Ընտանեկան դաստիարակության ճգնաժամը և նախադպրոցական դաստիարակության մասնավոր ու ֆիլանտրոպիկ հիմնարկների տարածումը բուրժուական երկրներում (Ամերիկա, Գերմանիա, Ֆրանսիա, Անգլիա): Նախադպրոցական հիմնարկների աշխատանքների մանկավարժական առանձնահատկությունները տարբեր պետություններում:

Կանանց պրոլետարական շարժման ծագումն ու զարգացումը և նախադպրոցական հասակի երեխաների հասարակական դաստիարակության հարցերը:

Ավգուստ Բեբելը և Կլարա Ցետկինը բանվորուհիների դրության և նախադպրոցական հասակի երեխաների հասարակական դաստիարակության մասին: Նախադպրոցական դաստիարակությունը սոցիալ-դեմոկրատական կուսակցության-



սին, դաստիարակության նպատակները ու խնդիրները: «Մանկան տունը» որպես նախադպրոցական հիմնարկի տիպ Իտալիայում:

Ֆրոբելիզմի կրոնականությունը, միստիցիզմը և ինդիվիդուալիզմը որպես նախադպրոցական հասակի երեխաների բուրժուական դաստիարակության հիմքը («Մանկան տունը»): Երեխաների դաստիարակման նպատակը յեղած հայացքները որպես ազատ և ինքնակամ զարգացում: Երեխաների զարգացման վրա հիմնված արտաքին զգայարանների դաստիարակության մեթոդը, ինքնադաստիարակման և ինքնակրթության հիմնական ուղի: Դիդակտիկ մատերիալի սիստեմը և նրա օգտագործման մեթոդիկան մանկավարժական աշխատանքում: Ղեկավարողի դերը և նրա պասսիվության խնդիրը Մոնտեսորիի սիստեմում: Նախադպրոցական հասակի երեխաների պարապմունքների բովանդակության վերլուծությունը և մեթոդները ըստ Մոնտեսորիի սիստեմի (աշխատանքային դաստիարակություն, բնություն, խոսք, գրագիտություն, և հաշիվ, խաղերի և խմբական պարապմունքների բացակայություն): Մոնտեսորիի սիստեմի աշխատանքի մեթոդիկայի դրական մոմենտների վերլուծությունը: Մոնտեսորիի մանկավարժությունը ի սպաս իտալական ֆաշիզմի:

V Դաստիարակությունն ու մանկավարժությունը ԽՍՀՄ-ում — 2 ժամ:

1. Ցարական Ռուսաստանի դպրոցական ռեֆորմը XVIII դարի վերջեր-

քում և XIX դարի առաջին կեսում։ Նախադպրոցական հասակի յերեխա-ների ընտանեկան դաստիարակու-թյունը և յերեխաների մասնավոր ու հասարակական խնամատարա-կան հիմնարկների առաջանալը - 3 ժամ։

Բարոյական սիստեմը ըստ Յեկատերինա II-ի «ուսումնարանների հիմնարկման հանձնա-ժողովի» ակտանյութերի և ըստ 1804 և 1828 թ.թ. կանոնադրությունների (կարգապահություն, պատ-իժները, բռնադատությունը)։

Արևմտյան Յեվրոպայի մանկավարժության ազդեցությունը յերեխաների ընտանեկան դաս-տիարակության բարենորոգման վրա։ Ի. Ի. Բեց-կին և նրա, «նոր տեսակի մարդկանց դաստիարա-կության» պլանը «դաստիարակչական տների» միջոցով։ Առաջին, դաստիարակչական տների «որբանոցների» և «պահպանման դպրոցնե-րի» առաջացումը որպես յերեխաների մասնա-վոր և հասարակական խնամատարության հիմ-նարկներ։ Ընտանեկան դաստիարակության առա-ջին գործեր-ձեռնարկները։ Յերեխաների ընտա-նեկան դաստիարակության ֆունկցիաները Վ. Գ. Բելինսկու-կողմից։

2. XIX դարի վաթսունական թվականների դպրոցական բարենորոգումը և Պիրոգովյան շար-ժումը Ռուսաստանում (60-ական թ.թ.-ից մին-չև 1905 թ. հեղափոխությունը) - 4 ժամ։

1. Դպրոցում դաստիարակելու և կրթելու



գործի բարենորոգման համար ծագած հասարա-կական-մանկավարժական շարժումը, Ն. Գ. Չեր-նիշևսկու կողմից առաջադրված արմատական պահանջները դաստիարակության հարցերի վե-րաբերմամբ։ Բուրժուական դպրոցական բարենորո-գումները՝ Ռեալական, զեմստվոյական և ծխական-յեկեղեցական դպրոցները։

Դասական և ռեալական կրթություն։

Կ. Դ. Ուշինսկին ազգային դաստիարակու-թյան և աշխատանքի՝ դպրոցում ունեցած բարո-յական-դաստիարակչական դերի ու նշանակության մասին։ Մանկավարժը և նրա պատրաստման վե-րաբերյալ հայացքները։ Ուշինսկու նշանակությու-նը մանկական հասակի հոգեբանության ուսում-նասիրության կազմակերպման բնագավառում։ Ուշին-սկու հայացքները կնոջ և մանկապարտեզ-ների մասին։

Լ. Ն. Տոլստոյը և «ազատ դաստիարակության» մասին բուրժուական տեսությունը։ Յասնայա Պոլ-յանայի դպրոցի պրակտիկան։

Պ. Ֆ. Լեսգաֆտը - նրա «Ընտանեկան» հիմնադրույթ-ները յերեխաների ընտանեկան դաստիարակու-թյան մասին։

2. Պիրոգովյան շարժման ծագումը, զարգա-ցումը Ռուսաստանում - նախադպրոցա-կան դաստիարակության առաջին ե-տապը Ռուսաստանում (60-ական թվա-կաններից մինչև 1905 թ.)։

ա) Ռուսական Պիրոգովյան շարժման կազ-

թյունն ու խնդիրները։ Մասնավոր և հասարակական խնամատարական հիմնարկների բարենորոգումը Ռուսաստանում, ըստ Ֆրեբելի սիստեմի («վարժարաններ», «պահպանման դպրոցներ»)։ Նախադպրոցական հասակի յերեխաների ընտանեկան դաստիարակության դրությունը բուրժուական և մանր բուրժուական ընտանիքում և այն քաղաքավարելու գործնական միջոցառումներ, առաջադրված մանկավարժական մտքի կողմից։ Նախադպրոցական հասակի յերեխաների «հասարակական դաստիարակության» խնդիրները և ռուսական Ֆրեբելյան շարժման գործնական միջոցառումները։

բ/ Մանկապարտեզի տեսությունն ու պրակտիկան Ռուսաստանում։ Ֆրեբելյան սիստեմի և ռուսական առաջին մանկապարտեզների պրակտիկայի քննադատությունը։ Մանկապարտեզի նպատակն ու նշանակությունը։ Մանկապարտեզի և դպրոցի կապի հիմնական ուղիները։

Մանկապարտեզի ներքին կազմակերպման հիմնական սկզբունքները։ Պարապմունքների բովանդակությունն ու մեթոդիկան մանկապարտեզում. Պրակտիկայի վերլուծությունը (որը մանկապարտեզում)։ Բուրժուական մանկապարտեզների պրակտիկայի առանձնահատկությունները։

գ/ Նախադպրոցական աշխատողների պատրաստումը — բարձրագույն կրթություն, դասընթացների դպրոց։

3. Մանր բուրժուական մանկավարժների պայքարը «ազատ դպրոցի»



և «յերեխաների հասարակական նախադպրոցական ազատ դաստիարակության» համար (1905 թ. մինչև հոկտեմբեր) նրա զարգացման յերկրորդ էտապում — 9 ժամ։

1. Ռուսական դպրոցի քննադատությունը 1905-1907 թ. հեղափոխության տարիներում և մանր բուրժուական մանկավարժների պահանջները Ռուսաստանում «կրթության ընդհանուր ազատության» անհրաժեշտության, «ընտանեկան ազատ դպրոցների» ստեղծման և «յերեխաների ազատագրման» մասին։ Բուրժուական կրթության բնագավառում «ազատ դեմոկրատական» պահանջների լիկվիդացիայի ռեակցիայի տարիներին։

2. Նախադպրոցական դաստ. պրակտիկայի զարգացման յերկրորդ էտապը Ռուսաստանում։

ա/ Ընտանեկան դաստիարակության ճգնաժամը. Նախադպրոցական հասակի յերեխաների «հասարակական դաստիարակության» պահանջը։ Նախադպրոցական հասակի յերեխաների «հասարակական դաստիարակության» կազմակերպման բնագավառում յերկու առաջին փորձերը։ Նախադպրոցական դաստիարակության բնագավառում մասնավոր և հասարակական նախաձեռնության զարգացումը մինչպատերազմյան շրջանում։ Նախադպրոցական դաստիարակությունը համալսարաններում։ Նախադպրոցական հասակի յերեխաների ընտանեկան և «հասարակական դաստիարակության» ընտանեկան դաստիարակության 2-րդ համագումարում. կանանց աշխատանքի աճումը և նախադպրոցական

դաստիարակության չեզոքացումը՝ իմպերիալիս-տական պատերազմի ընթացքում: Փետրվարյան հեղափոխությունը և նախադպրոցական դաստիարակությունը:

Բ/ Նախադպրոցական դաստիարակության տեսությունը Ռուսաստանում, երկու հեղափոխությունների միջև ընկած ժամանակաշրջանում (1905-1917 թ.): Նախադպրոցական հասակի մանկավարժության հիմնական [illegible] ուղղությունները: Մանկաբանական հետազոտությունները նախադպրոցական դաստիարակության բնագավառում: Մանկապարտեզի և դպրոցի աշխատանքների կապի և հաջորդականության պրոբլեմը: «Ազատ դաստիարակության» մանր բուրժուական տեսության էությունն ու բնորոշ գծերը:

Կ.Ն. Վենտցելը՝ որպես «ազատ դաստիարակության» «ձախ» ուղղության գաղափարախոս: «Ազատ յերեխայի տուն» և «ֆրեբելյան մանկապարտեզը» ըստ Վենտցելի:

«Ընտանեկան ազատ դպրոցի» և «ընտանեկան մանկապարտեզի» ու [illegible] դաստիարակության և կրթության [illegible] հանձնաժողովի աշխատանքը: «Ժողովրդական ազատ մանկապարտեզի» պրոբլեմը:

Մոսկվայի «Սեթլմենտ» (1905-1908 թ.թ.) և «Մանկական աշխատանք ու հանգիստ» (1908-1917) ընկերությունների ներկայացուցիչները «ազատ դաստիարակության» մանր բուրժուական տեսությունը:

Ս.Տ. Շացկին՝ որպես նախադպրոցական դաս-



տիարակության տեսության մշակման և պրակտիկայի գործում:

Դ.Դ. Բեննեին՝ որպես նախադպրոցական հասակի յերեխաների «ազատ դաստիարակության» գենետիկ մեթոդի ներկայացուցիչ:

Մոնտեսորիականությունը Ռուսաստանում մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը:

Գ/ Նախադպրոցական աշխատողների պատրաստումը «Բարձրագույն կրթության և կարճատև դասընթացների միջոցով»:

Կ. Հեղափոխական պրոլետարիատի պայքարը ժողովրդական կրթության, մասնավորապես յերեխաների հասարակական նախադպրոցական դաստիարակության համար մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը-կ.

Ժողովրդական կրթության դրությունը XX դարի սկզբում: Պայքար կին, հետ մնաց՝ աշխատավոր մասսաների պահանջներից: Լենինի պայքարը նարոդնիկության մանր բուրժուական պրոժեկտորության դեմ դաստիարակության հարցերում: Ցարական լուսավորության քաղաքականության քննադատությունը Վ.Ի. Լենինի մինչհեղափոխական շրջանի աշխատություններում:

Կանանց աշխատանքը և նախադպրոցական հասակի յերեխաների հասարակական դաստիարակությունը:

Վ. Ի. Լենինը կանանց և յերեխաների աշխատանքի մասին արդյունաբերության մեջ և հեղափոխական շարժումներում կնոջ մասնակցության մասին: Սոցիալ-դեմոկրատական կուսակցության ծրագիրը կանանց և յերեխաների աշխատանքի, մոր և մանկության պահպանության ինչպես նաև նախադպրոցական հասակի յերեխաների հասարակական դաստիարակության մասին:

5. Կոմունիստական կրթության զարգացման հիմնական էտապները Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո:

Նախադպրոցական դաստիարակության զարգացման էտապները ՍՍՀՄ-ում - 4 ժամ.

Ժողովրդական կրթության բնագավառի պատմական խնդիրները Հոկտեմբերից հետո, որոնք արտահայտվել են «կուսակցության ծրագրի վերանայման մատերիալներում» (1917 թ.), կոմունիստական կուսակցության ծրագրում (1918 թ.) և խորհրդային իշխանության օրենսդրության մեջ:

Վ. Ի. Լենինը պրոլետարիատի դիկտատուրայի շրջանում դպրոցի ունեցած դերի մասին:

Վ. Ի. Լենինը կնոջ ազատագրման և մանկապարտեզի դերի մասին: Խորհրդային կառավարության դեկլարացիան նախադպրոցական դաստիարակության մասին:

Նախադպրոցական դաստիարակության



1-ին էտապ — Նախադպրոցական դաստիարակության I համագումարի վորոշումները, կուսակցական I խորհրդակցությունը ժողլուսավորության խնդիրների շուրջ (1921 թ.) և նախադպրոցական դաստիարակության հարցերը: Նախահեղափոխական ժառանգության ազդեցությունը նախադպրոցական դաստիարակության տեսության և պրակտիկայի վրա:

2-րդ էտապ — Նախադպրոցական դաստիարակության II համագումարը, — Նախադպրոցական հիմնարկների աշխատանքների բովանդակության վերանայման փորձերը: Նախադպրոցական դաստիարակության III համագումարը և նախադպրոցական դաստիարակության խորհրդային սիստեմի ձևավորումը:

III համագումարի սխալները:

3-րդ էտապ — Նախադպրոցական դաստիարակության IV համագումարը և նախադպրոցական աշխատանքների բարելավման համար նշված ձեռնարկումները: Նախադպրոցական դաստիարակությունը առաջին հնգամյակի ընթացքում.

Ընկ. Ստալինի պատմական դերը ժողովրդական կրթության վերաբերյալ Վ. Ի. Լենինի թողած պատգամների իրագործման բնագավառում: Ստալինը դպրոցի դերի և դպրոցի կառուցման ուղիների մասին ներկա էտապում: ՀամԿոմԿ(բ) կուսի կենտկոմի վորոշումները դպրոցի մասին: Այդ վորոշումների նշանակությունը նախադպրոցական հիմնարկների աշխատանքների «ձախ» խեղաթյուրումների դեմ պայքարելու գործում: Նախադպրոցական դաստիարակությունը

ՀՀ Ազգային գրադարան
NL1015291

31 МАР 1936 228

11
29699

3.

3

11
29699